Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2020 թվականի 28 հոկտեմբերի
N 10-ն հրամանի

Ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Շնող բնակավայրում
Իրականացված բնապահպանական ծրագրի մասին

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) անվանումը՝
ՀՀ Լոռու մարզի Շնող խոշորացված համայնքի ներդրված արևային լուսավորության համակարգի ընդլայնման ծրագիր:

Ա) ԾՐԱԳՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրավական հիմքերը (նշել համայնքի ավագանու որոշման և ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի ամսաթիվը և համարը)՝
ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 2021թ օգոստոսի 11-ի N 60-Ա որոշում և 2021 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունված Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին օրենք:
1. Ծրագրի սկիզբը և ավարտը՝ *16.03.2022թ-20.12.2022թ:*

2. Ծրագրի նախագծային արժեքը՝ *5067 հազ. դրամ, որից 4717 հազ. դրամ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին և 350 հազ. դրամ համայնքային բյուջեի միջոցների հաշվին:*

3. Համայնքի առկա խնդիրները և նախնական վիճակի նկարագրությունը՝ (Ծրագրով անդրադարձ կատարված բնապահպանության և առողջապահության ոլորտներում)
Շնող խոշորացված համայնքում գործում է արևային էներգիայով ինքնալիցքավորվող թվով 62 լուսատու, որոնք ապահովում են շուրջ 1,7 կմ ներհամայնքային փողոցների լուսավորությունը:
Համայնքում ներդրված բնական էներգակիրների անխափաբ աշխատանքի արդյունքում էլեկտրաէներգիայի խնայությունն ամսական կազմում է տարեկան շուրջ 750 հազար ՀՀ դրամ: Համայնքում հաճախակի են լինում հոսանքանջատումներ, ինչով պայմանավորված չեն գործում Շնող համայնքի բուժամբուլատորիայում առկա պատվաստանյութերի պահպանման սառնարանները: Արդյունքում պատվաստանյութը ստիպված են լինում թափել:
4. Ծրագրի նպատակը և Ծրագրով հաստատված ուղղակի և վերջնական ակնկալվող արդյունքները՝
Ծրագրի ընդհանուր նպատակն է բարելավել ազդակիր Շնող համայնքի բնական միջավայրը, վերականգնել և ամրապնդել համայնքի բնակչության առողջությունը:
Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝

- *Համայնքի շուրջ 1 կմ երկարությամբ թվով 3 փողոցներ կլուսավորվեն բնական լուսատուներով:*
- *Կբարձրանա բնակիչների սոցիալական կյանքի բարեկեցության մակարդակը և կապահովվի անվտանգություն:*
- *Շնող համայնքում գործող բուժամբուլատորիայի համար այլընտրանքային էներգիայի աղբյուրի և նոր տեխնիկապես զարգացած սառնարանների ձեռքբերում:*

5. Ծրագրի շահառուները՝ (նկարագրել շահառուների խումբը՝ ըստ տարիքային, մասնագիտական, կարիքավորության կամ այլ գործոնների և նախատեսվող թիվը)
Ծրագրի ուղղակի շահառուները Շնող բնակավայրի 10-րդ, 11-րդ և 13-րդ փողոցների շուրջ 270 բնակիչներն են: Ծրագրի անուղղակի շահառուները Շնող բնակավայրի բոլոր բնակիչներն են (2923

մարդ), որոնց սոցիալական պաշտպանվածությունն ու անվտանգությունն ապահովվում է ներհամայնքային փողոցների լուսավորությամբ:

6. Ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումները և դրանց ընտրության հիմնավորումները՝ (նշել Ծրագրի, ինչպես նաև ծրագրում ընդգրկված միջոցառումների ընտրման հիմնական պատճառները)

Շնող համայնքում գործում է արևային էներգիայով ինքնալիցքավորվող թվով 62 լուսատուներ, որոնք ապահովում են շուրջ 1,7 կմ ներհամայնքային փողոցների լուսավորությունը: Համայնքում ներդրված բնական էներգակիրների անխափան աշխատանի արդյունքում էլեկտրաէներգիայի խնայողությունը ամսական կազմում է շուրջ 62 հազար դրամ՝ տարեկան հասնելով 750 հազար դրամի: Արդյունքում կարևորվել է արձանագրված արդյունքների շարունակականության ապահովումը՝ Շնող համայնքում արևային էներգիայով ինքնալիցքավորվող լուսատուների տեղադրման միջոցով և դրա արդյունքում տնտեսված գումարներով առողջապահության ոլորտում ներդրումներ կատարելը:

Բ) ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Ծրագրի իրականացման փաստացի արժեքը՝ 5033,08 հազ. դրամ, որից 4683,08 հազ. դրամ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին և 350 հազ. դրամ համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

2. Ծրագրի փաստացի շահառուները՝ (նշել փաստացի շահառուների խումբը և թիվը ամբողջ ծրագրի ընթացքում)

Ծրագրի ուղղակի շահառուները Շնող բնակավայրի 10-րդ, 11-րդ և 13-րդ փողոցների շուրջ 270 բնակիչներն են: Ծրագրի անուղղակի շահառուները Շնող բնակավայրի բոլոր բնակիչներն են, որոնց սոցիալական պաշտպանվածությունն ու անվտանգությունն ապահովվում է ներհամայնքային փողոցների լուսավորությամբ: Ընդհանուր՝2923 մարդ:

3. Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները՝ (նշել փաստացի իրականացված միջոցառումները՝ յուրաքանչյուրի մասով կատարված աշխատանքների, նկարագրությամբ)

Ծրագրի շրջանակում իրականացվել է Շնող համայնքում արևային էներգիայով ինքնալիցքավորվող լուսատուների տեղադրում միջոցառումը: Մասնավորապես՝ կազմվել են Շնող համայնքի փողոցների լուսավորության անցկացման /արևային լուսատուներով/ աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, որից հետո կազմակերպված գնման գործընթացի արդյունքում ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար կապալի, տեխնիկական և հեղինակայային հսկողության պայմանագրեր են կնքվել: Կնքված պայմանագրերի համաձայն կատարվել են աշխատանքները, կազմվել են հանձնման-ընդունման ակտեր, որոնց հիման վրա կատարվել են վճարումները:

4. Ծրագրի իրականացնողները և աջակցողները՝ (թվարկել Ծրագրի յուրաքանչյուր միջոցառման մասով իրականացման մասնակիցների (ՏԻՄ, մասնավոր ընկերություն, ոչ առևտրային կազմակերպություն, միջազգային գործընկեր կամ հասարակական կազմակերպություն) անվանումները՝ *Շնողի համայնքապետարան:*

5. Ծրագրի փաստացի վերջնական արդյունքների նկարագրությունը՝

- Շնող բնակավայրի 10-րդ, 11-րդ և 13-րդ փողոցները լուսավորվել են արևային լուսատուներով:
- Բարձրացել է Շնող համայնքի բնակիչների սոցիալական կյանքի բարեկեցությունը:
- Շնող համայնքում գործող բուժամբուլատորիայի համար ձեռք է բերվել գեներատոր և պատվաստանյութերի համար նախատեսված սառնարան:

6. Հաշվետվության հրապարակումը՝ (նշել կայքէջում տեղադրման ամսաթիվը, ՁԼՄ-ներում հրապարակման դեպքում՝ նաև տալ հղումները) *22.02.2023թ:*